Երկրորդ ընթերցում

Պ-570-15.04.2020-ՏՀ-011

«ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-265 օրենքի (այսուհետ՝Օրենք) 14-րդ հոդվածում՝

1) «սահմանային» բառից հետո լրացնել «ավտոտրանսպորտային» բառը,

2) լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պետական սահմանի անցման կետերում ավտոտրանսպորտային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածում «սահմանային» բառից հետո լրացնել «ավտոտրանսպորտային» բառը.

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

Երկրորդ ընթերցում

Պ-570-15.04.2020-ՏՀ-011/1

«ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-265 օրենքի (այսուհետ՝Օրենք) 14-րդ հոդվածում՝

1) «սահմանային» բառից հետո լրացնել «ավտոտրանսպորտային» բառը,
2) լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պետական սահմանի անցման կետերում ավտոտրանսպորտային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածում «սահմանային» բառից հետո լրացնել «ավտոտրանսպորտային» բառը.

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում ~~հրապարակմանը հաջորդող օրվանից 1 ամիս հետո~~ 2022 թվականի հունվարի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-570-15.04.2020-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	Հեղինակ պատգամավոր Արթուր Դալլաքյան	Հոդված 3	«Հրապարակմանը հաջորդող օրվանից 1 ամիս հետո» բառերը փոխարինել «2022 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: